և զմիւսն զտէր Վարդան սբ. Յարութեան յուսարարն, զտէր Ած.ատուրն, զտէր Յովհաննէսն զԱնապատցի, զտէր Նիկողոսն, զտէր Սահակն, զտէր Խաչատուրն, զտէր Պետրոսն, զտէր Սիմեոն, զտէր Դաւիթն, զտէր Հայրապետն . . և դասս սարկաւագաց, զՇաղաւարն, զպատաղ Գրիգորն. զԱմիրիսան զսօնապետն, զմիւս Գրիգորն, զՄանուկն, զԿարապետն, զՍիմաւոնն, զԾենղեան Յակոբն, եւ զտնտես Մեսրոպն. զՍբ. Յակոբայ տնտես Մարտիրոսն, զթղթիս կոկող Մելգոնն, զՊողոսն եւ զՀաճի Սաֆարն, եւ զթերզի Յակոբն, զՆուրիջանն. զՄիրիձանն . . . յիշեցէք զտէր Գրիգոր հայրապետն Սբ. Երուսաղիմայ եւ զայլ միաբանսն զոր ի վերոյ գրեցաք . . . »։

Գրիգոր Պարոնտէր պատրիարքի տապանագիրն է հետեւեալը.

«Այս է պատրիարգ Գրիգոր Պարոնտէր.
Այր բազմավաստակ բարեաց բարեսէր.
Բազում չինութեանց աշխատս ածէր.
Գեղեցիկ վարուց օրինակ լինէր.
Մեծ անուն թողեալ աշակերտ կարգէր.
Իւր բարի կրօնից ընտիր հոգեսէր։
Ամբս տասնեւչորս? հայրապետ նստէր
Բազում գեղեցիկ կանոն յօրինէր»։
1645. ՌԴԴ.

Սոյն տապանագրին մէջ, Գրիգոր Պարոնտէրի պարք. իշխանութեան տեւողութիւնը տասնեւչորս տարի միայն նշանակուած է, ինչ որ ճիշդ չթուիր. վասնզի յիշատակարանք երկար գործունէութիւն մը կ'ընծայեն Պարոնտէր պատրիարքի. բաց ասակ Երուսաղէմի պատրիարքաց յաջորդութեան վերաբերեալ յիշատակարան մ'ալ (ՄՁ. թ. 997) կը գրէ «եւ կալաւ (Պարոնտէր) զաթոռ հայրապետութեան ամս Ի. և չորս»։ Պարոնտէր պատրիարքին իշխանութեան սկիզբը եթէ նկատենք իր եպիսկոպոսութեան թուականը, որ է 1613, այն ատեն երեսուն և երկու տարուան ժամանակամիջոց մը վարած կ'ըլլայ իր պատրիարքութիւնը. հետեւաբար սխալ մ'է տապանագրին նշանակած «ամս տասն և չորս» խօսքը։

ԳՐԻԳՈՐ Զ. ՊԵ. ՇԻՐՈՒԱՆՑԻ (ՇԱՄԱԽԻ ԳԱՒԱՌ) ՇՂԹԱՑԱԿԻՐ.— Հայրը՝ Մհտ. Աւետիս, մայրը Ճօհար։ (ՄՁ. թ. 1464) աշկ. Վարդան վրդ. Բաղիշեցիին. 1707ին վանահայր Սաղեանի Ս. Ստեփանոս վանքին (Ն. Սաղեանի էջ 33)։ Վանահայր Տարոնի